ՀՀ ԿԳՄՍՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԳՐԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ 2022 Թ. ՄԱՅԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նշված ժամանակահատվածում կազմակերպել եմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, ինչպես նաև նախարարության վարչությունների պետերի մասնակցությամբ միջոցառումների անցկացման ընթացակարգային գործընթացը և ապահովել եմ կազմակերպչական կանոնները:

Մայիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում իմ մասնակցությամբ կազմակերպվել է 137 ներքին արարողակարգային միջոցառումներ, որոնք տեղի են ունեցել ինչպես ԿԳՄՍ նախարարությունում, այնպես էլ նախարարությունից դուրս:

Սահմանվել են ներքին արարողակարգային միասնական կանոններ՝ ապահովելով միասնական արարողակարգային գործելակերպ և ընթացակարգ, ինչպես նաև հաշվի առնելով միջոցառման բնույթը: Ըստ այդմ՝ միջոցառումներն ունեցել են հետևյալ ուղղվածությունը և բնույթը.

1. Նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, նախարարության վարչությունների պետերի մասնակցությամբ տեղի ունեցող միջոցառումներ, որոնց կազմակերպման պատասխանատուն նախարարությունն է:

2. Նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, ինչպես նաև նախարարության վարչությունների պետերի մասնակցությամբ տեղի ունեցող միջոցառումներ, որոնց կազմակերպման անմիջական պատասխանատուն նախարարությունը չէ, բայց դրանք իրականացվում են նախարարության աջակցությամբ:

3. Նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, ինչպես նաև նախարարության վարչությունների

պետերի մասնակցությամբ տեղի ունեցող միջոցառումներ, որոնց նրանք ներկա են որպես հրավիրյալներ:

Նախարարության պաշտոնական կայքէջի (escs.am) և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում նախարարության պաշտոնական էջի համար պատրաստել եմ նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, նախարարության վարչությունների պետերի մասնակցությամբ 110 տեղեկատվական բնույթի նյութ, որոնք նաև տարածվել են ԶԼՄ-ներով:

Պատասխանել եմ լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ ԿԳՄՍ նախարարության ոլորտներին առնչվող 7 հարցման:

Մասնակցել եմ նաև ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Հայաստանում անցկացվող Կենսաբանության միջազգային 33-րդ օլիմպիադայի և «Starmus VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի կազմակերպչական-արարողակարգային աշխատանքներին:

Բացի դրանից՝ մասնակցել եմ նախարարության տեղեկատվական քաղաքականության իրականացման աշխատանքներին, նոր ծրագրերի, նախագծերի վերաբերյալ ներկայացրել առաջարկություններ, ըստ անհրաժեշտության՝ կատարել այլ ընթացիկ աշխատանքներ:

Վարչության մյուս փորձագետի հետ մշակել եմ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներքին արարողակարգային միջոցառումների անցկացման» կարգը, որը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 11 հոկտեմբերի 2022 թվականի N 1831-Ա/2 հրամանով:

ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության փորձագետ Գրետա Գրիգորյան